



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

Իսկ յորժամ յառաջին նուագի մտի ի պահարան Տաճարիս՝ որ խորան կոչիր, որ և կայ և երևի արդ ըստ հին կազմությանն առ դրամբ նորակառույց պահարանացս, գտի փոքր յոյժ և անձուկ և ոչ բաւական ի պարունակել զամենայն զգեստս՝ սպասս՝ և զանօթոյս Աթոռոյս, որ մի ի միոյ խառն և դիզադէզ գմիմամբք կուտակեալ մերձ էին յապակամութիւն, և կարծել այնպէս էր տեսողաց, եթէ ոչ որ խնամոտ էր լեալ և հոգածու պահպանութեան այնոցիկ և յայնպիսի անշքացեալ պայմանի գտանէին, մինչ զի և մնացելոցն զգեստոց, զարդոց և անօթոց ունէր հանդիսիլ վիճակի կորուսելոցն առաջնոց, թող զի միաբանութեամբ Աթոռոյս չէր տեղի ուրեք ուր զշուրջառս մարթաւսն առնող զիրեամբք յաւուրս տօնից, այլ զգննութիւն ի դասին և յզգեստաւորիլ պատարագիչ եպիսկոպոսաց դժուարին յոյժ էր թագին որ ի գլուխըս՝ ի դուրս գալ ի խորան անուանելոյն, իսկ կաթողիկոսունք սակս ոչ գոյոյ յարմարաւոր տեղոյ՝ զառաջեալ միոյ ի փոքր սեղանացն լինէին զգեստաւորեալք, վասն որոյ ի բարեկարգութիւն Մայր Տաճարիս և յապահով և ի վազելուչ պահպանութիւն նուիրական հնութեանց և եկեղեցական զարդոց և անգին մասանց սրբոց պանծալի յիշատակաց ի նախնեաց մնացելոց, յորոց զբազումս ոչ սակաւ աշխատութեամբ ի ձեռս բերի յալ և այլ վիճակաց յորժամ յայց ելանել մեզ յաջողեցաւ քրիստոսաւանդ հօտին իմոյ սիրեցելոյ, խորհեցալ զերիս ընդարձակագոյն պահարանս շինել, զորս Տառն օգնականութեամբ ի հիմանց կառուցի, զառաջինն սակս հանապազօրեալ

պիտոյից և գործածութեան զգեստոց և սպասուց. զմիջինն յաղազս սրբոց նշխարաց և այլոց սրբութեանց, և զերրորդն յատկացուցեալ վասն ամենատեսակ հնութեանց:

Եւ յետ բազում դժուարութեամբ ի գլուխ հանելոյ զշինութիւն պահարանաց յարեւելս կոյս կցելոց ընդ Սուրբ Սեղանացն՝ յամի Տառն 1880, և պատրաստեալ զնորաշէն ընկուզեալ դարանս, մինչ կամէի զետեղել զիրաքանչիւրն ըստ իւրումն կարգի, տեսի զի արծաթեղէն և ոսկեղէն զարդք և անօթք Սրբոյ Աթոռոյս վասն անձկութեան տեղոյն առաջնոյ, բազումք բեկեալ էին և խեղաթիւրեալք և շատք սևացեալ, նոյնպէս և բերեալքն իմ ի գաստաց յուլմութեամբ ժամանակաց անցելոց զմասս կարի նանմութեան և անշքութեան կրկին յինքեանս, ոչ բարոք համարեցալ այնպիսի ամլպել դրութեամբ զետեղել, այլ ընդ ձեռն ոսկերչաց ճարտարութեան յառաջին պատկեր շքեղութեան վերանել փոյթ կալալ՝ զբեկեալս և զխախտեալս նորոգելով և զպակասորդս ըստ կարի լրացուցանելով, և զամենեսին միանգամայն մաքրելով յաղտոյ և ի ժանկոյ, որով հնութիւնքն այնոքիկ թօթափեցին զաղտն անմաքուր և ի նորոյ զգեցան զվաշելութիւն, և պատրաստեալ զտպագիր թուանշանս, և կախեալ թելի զիրաքանչիւր սրբազան անօթոց՝ նշխարաց սրբոց զգեստոց՝ Հայրապետական և Եպիսկոպոսական մատանեաց՝ զառազանաց՝ պատուանշանաց և այլոց համայնից, որ ինչ էին սեփականութիւնք նախորդաց իմոց Հովուապետաց և հովուաց և իմ, և որ ինչ ընծայարեւորութիւնք ի Սուրբ Տաճարս ըստ կարելոյն նաեւ զժամանակ հնութեան իւրաքանչիւրոցն համառօտի բացատրեալ, և ապա ի գեղաշէն փայտափերտ և ապակաւոր դարանս ուրոյն ուրոյն դասակարգութեամբ ամփոփեալ զետեղեցաք վաղեւապէս, և զմի մի ի նոցանէ

* Ծարուակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Լ-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից և ԺԱ-ից:

արժանազանաբար թուամամարտք ըստ տեսակաց և ըստ հանգամանաց կազմեցաք զերկուս միօրինակ տու- մարս, որոց մին պարտ է պահել միշտ ի ներքին պահարանի աստ՝ և միւսն ի Հայրապետանոցի:

Արդ ճանաչելով իմ գյարդ սրբութեանցն և հնու- թեանց՝ որոյ այսօր ի խնդիր են ամենայն ազգք լուսաւորեալ աշխարհաց, ոչ միայն յիծոց սեփա- կանութեանց ոչ երբէք դանդաղեցայ զատ իս եղեալ հին աւուրց դրանս, զոսկեալ գօտիս մարգարտայիս, զեկեղեցեալսն զգետնս և զգաւազանս և այլն, և այլն, ի ժողովս հնութեանց նուիրել ամենախանձաբար, այլ մանաւանդ առ ի բազմապատկել զթի գտելոցն զարդիս յիշատակաց ի նորակաւոյց պահարանս, ոչ յապաղիմ հրաւիրել յաւետ ի նոյն գործ ազգօգուտ և Աստուածամանոյ զամենեւեմն՝ որ էք այժմ և որ զալոց էք զկնի՝ զպատրիարքունս, զառաջնորդս, զվանահայրս վանուց և մենաստանաց, զվարդա- պետս, զքահանայս, զազնուազարմս և զհամօրէն ուխտաւոր հարազատ որդիս զերգաւս Սրբոյ Աթո- ռոյս Էջմիածնի՝ մասնակից լինել այսմ գործոյ նուի- րատուութեանս ամենատեսակ-ազգային հնութեանց ի բարեկարգութիւն և ի պարծանս լուսածին Մօր Հայաստանեայց՝ տեղւոյ ասեմ Իջման փառաց որդ- տյն յաիտեմակալմի:

Եւ քանզի յեղեղուկ յոյժ և անկայուն լինին յաւետ այն ամենայն գործք: ու կարգադրութիւն, որոց չիցեն հիմնեալ ի վերայ հաստատուն կանոնաց բարեկար- գութեան, ուստի և չկարեն զհետ ընրել զցանկալին պտուղ եթէ կարճատեք իցեն յապագային խնամք և հոգատարութիւնք ի պահպանութիւն կանոնացն, այդ սակս այսու Հայրապետական կոնցակաւ կանոնա- դրեն և իրիւ կտակ աւանդեն յաջորդաց իմոց և ամենից Եպիսկոպոսաց և վարդապետաց միաբանից Սրբոյ Աթորոյս, զի բանալին առաջին պահարանի մնացել միշտ առ Աւագ լուսարարն Տաճարիս, իսկ երկաթեայ դրանն՝ որ երկոյցորք բանալեօք բանի, մին մնացել առ Կաթողիկոսն, և միւսն առ ժամօրհ- նոյ Եպիսկոպոսն: Նոյնպէս և երրորդ պահարանն ունի զերկուս բանալիս, յորոց մին մնացել առ Աւագ լուսարարն, և միւսն առ Եպիսկոպոս ում ի միաբանից Աթորոյս՝ որում և պատշաճ դատեցի Հայրապետն յամենն, որպէսզի ի ղեպս հարկաւո- րութեան բանալոյ, առանց ի մի ժողովելոյ երից Եպիսկոպոսաց՝ յորս են բանալիքն՝ և փոխանորդի Հայրապետին՝ անհնար լիցի բանալ:

Բառձանդ սրտի իմոյ և հոգւոյ այն է, սիրելիք իմ ի Տէր, զի գէթ յայսմնտէ աճեսցի թի պատուական յիշատակաց և հնութեանց յԱթոռս այս զերգաւս ի կիողոնն, ասեմ հաւատոյ Հայաստանեայց Եկեղեց- տյ, ուստի պատուէր սիրոյ արանդեմ գահաժառանգ յաջորդաց իմոյ և համօրէն միաբանից Սրբոյ Էջ- միածնի, միանգամայն խնդրեմ գուն գործել յաւետ ամբիսի ի ապահով պահպանութեան սրբոց մա- սանց՝ զգետնոց՝ զարդոց՝ անթոց՝ և այլոց ամե- նից՝ որ ի պահարանս ժողովցի, ճախանձախնդիր հանդիսանալով ամբողջութեան նոցին և բարեկար- գութեան յապագային, չմտաբերել և ոչ զօրել երբէք որեկեղ՝ միջոցօք ձեռնամուխ լինել ի նոսա և չտալ քնաւ

իրաւունս ձեռնբերց լինելոյ շարժմտաց և ախտացե- լոց կորստաբեր շահասիրութեամբ, և ոչ թողուլ ումեք արտաքս տանիլ և ոչ զմին ի հնութեանց ի զարդոց և ի զկեստոց, և կամ ընծայել ումեք զնշխարս Սրբոց և զայսս, զի մինչև ցաւորս մեր տալով երբեմն իրիւս ատմամանակեայ և երբեմն ընծայելով ակամաւոր հիւրոց՝ պակասեալ են յոյժ ի նշխարաց սրբոց և ի թանկագին հնութեանց:

Իսկ եթէ իշխեսցէ որ ատանց խղճի միւս զձեռն շար մտօք յամբողջութիւն ի մի վայր ժողովալ սրբութեանց և հնութեանց, եթէ զգետնոց՝ անթոց՝ զարդոց և եթէ նշխարաց սրբոց, ո՞ր քն և լինիցի այն ի հետագայից՝ պարտական գտանիցի առաջի ամեղ առնեմն Քրիստոսի, և զմասն ժառանգութեան ընդ սեղանակապետս ընկալցի ի հանդերձելումն, քանզի զսակաւթիւ նշխարս պարծանաց փառնց ի միաթա- րութիւն ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց ձկակ վատնել այնպիսին յօգուտ անձին և ի փառս անուան իւրոյ, ոտնակոխ արարեալ զօգուտ և զփառս Մօր իւրոյ Սրբոյ Էջմիածնի:

Այլ և պարտ վարկանիմ պատուիրել սիրելեաց ի Քրիստոս, ջանալ զտպարան Աթորոյս՝ զոր բազում աշխատութեամբ ծաղկեցուցեալ ընդարձակեցի, ի գործադրութեան լիցի միշտ և զհին և զնոր մատնեա- գրութիւնս կարևորս ի լոյս ընծայելով, լուսաւորեցէ զպաշտաց հոգւոյ մանկանց նորոյս Սիովմի: Մա- նաւանդ յանձն անձն և աղաչել փոյթ մեծ ունել սակս հոյակապ ժառանգաւորաց ճեմարանի Մայր Աթորոյս՝ զոր ի հիմանց կառուցի բազմազան մեղու- թեամբ և ազգի ազգի տառապանօք և ընտրանօք յամենայն կողմանց զմանկունս ուշիմս և զգաւտս ժողովալ ի նմա ըստ կանոնադրութեան իմոյ՝ դաս- տիարակել զմիտս և զսիրտ նոցա ուսմամբ և երկիւ- դի Տեառն, և ոգւով նախնեաց և ուղղափառ վարդա- պետաց խնամել և դարմանել զնոսա միշտ, և ի չափ հասակի կատարելութեան ժամանակս ձեռնադրել ի վարդապետս, և պատրաստել յառաքելութիւն բարո- զութեան, զի ըստ օրինակի երանելի սրբոց վարդա- պետացն առաջնոց տարցեն զԱնտարանն Տեառն մերոյ և զանտիս յաիտեմական կենաց առ ամենայն որդիս Մօրն լուսոյ Սրբոյ Էջմիածնի, լուսատու լի- ցին Եկեղեցւոյ, ճախանձաւոր պաշտպանի կրօնի և քարոզիչք բանին ճշմարտութեան և ազգութեան և դաւանութեան մերոյ և աւանդութեանց, տարածիչք դպրութեան լեզուիս և Աստուածահաճոյ առաքինու- թեանց, որոց քան զամենայն իրաց և հաստատու- թեանց առաւել պետս պետս ունի ազգս տառապիւալ, քանզի ընդ ամենայն ժամանակս ազգ մեր ի ձկնն անձնուէր հովուաց և վարդապետաց Եկեղեցւոյ զոգի առեալ և եկեալ է ի կենսն և ի փրկութիւն և ի պա- կասիլ այնպիսեաց՝ մոլորեալ ի ճանապարհէն կե- նաց և անկեալ ի փառաց և ի զօրութեան միութեան, և կործանեալ իսկ յանդուուդս թշուառութեան:

Յիշեցէք, եղբարք, զի որպէս Մայր Աթոռս ի վե- րայ Արարատայ զխորան սրբութեան իւրոյ հարեալ ընդ արևելս զփառաւորեալ քաղաք Աստուծոյ բարձ- րացեալ կայ ի լերին՝ որ ոչ ծածկի յաչաց ուստե-

բաց և դատերաց իրոց՝ լեկեղեցեացն Հայաստանեայց, սոյնպէս և ուխտն՝ որ ի սմա՝ ունել ունի սարսու իրրե զերկնաքաղաքացի լուսաւորս՝ լուսով հաւատոյ՝ սրբութեան վարուց՝ ոգով հաւատարմութեան և ողջամիտ վարդապետութեան օրինակ լինել հաճօրէն ուխտի Եկեղեցւոյ, և իրրե զկոյս զի ասորք ատաշի Բրիստոսի մախանձակի յաչս ամենեկուն և զսէր և զոգի բոլորեցունց ձգլ զսրբութիւն Աթոռոյս։ Մի թուլամալ ի բարեպաշտութեանց և ի խախտել և քայքայել զազգօգուտ աւանդութիւնս մախանձակ, զի մի ընդ փառաց մարոց առաջնոց ի հող իջցնեմ, և յայնժամ ամարատ ոգին Հայաստանեայց բողոք։ Կալցի զհովուաց Եկեղեցւոյ առաջի Բրիստոսի թէ, Տէ՛ր, քակեցին զցանկ նորա, և կթեն զնա անցաւորք ճանապարհի, և խող և երէվայրի արածեցաւ ի ձեռատունկ դրախտիս, և կորեաք յերկրի յերեսաց հովուացն՝ զորս դու ոչ առաքեցեր Տէ՛ր, և այնպէս անէծս արձակեցն զհետ մեր։

Ին արդ զայս ամենայն հաստատեալ ի մտի՝ և զարթոյցեալ ի սրտի ձերում զամ և զերկիւղ աւուրն բարութեան, զգուշացարո՛ք հաստատուն և անխափան պահել զաւանդս՝ զյիշատակս բարեպաշտ ոգւոց՝ և զայս իմ կտակ, աղօթակիցելով ընդ իս զի ողորմեսցի Աստուած աշխարհիս հայոց և Սրբոյ Սիօնիս, զորոյ զիմմունս ինքնին արկ, և ինքն փառօք և խորհրդովք իրովք յախտեանս յախտեցից ի սմա թագաւորեացէ. Ամէն։

Գևորգ Դ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(Կաթողիկոսի ստորագրությունը կարմիր թանաքով)
 Ի 25-ն դեկտեմբերի 1873 ամի Փրկչական,
 Ի ԺԳ. Քաղոցի ՌՅԻԳ. ազգ. թուականիս,
 Ի Ա. Էջմիածին, ի Վաղարշապատ։

№ 291

ՅԻՐՄԱՆ

(Թուրքերեն)

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 78.8×54.5 սմ.:
 —Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակներ՝ չունի:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ չկան:—Տողերը՝ ընդամենը 12 տող:—Գծումները՝ աչքի չափով:—Գիրը՝ արաբերեն (նզուր՝ թուրքերեն):—Ջարդագրություն՝ Յիրմանի վերնի մասում կա բառականգն գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի խարիսխը ունի մոտ 27 սմ. երկայնությունը, իսկ բուրգի բարձրությունը է մոտ 87 սմ.: Բուրգի ներքնի մասում միաձուլված գրված է մահմետական շիւքի իլլահ ռահման ռահիմ» բառերը, ոսկեգույն և կանաչ գույներով, իսկ բուրգի մեջ նկարված են ոսկեգույն ծաղիկներ և ճյուղեր: Բուրգի երկու կողմերում նկարված են զարդեր, ծաղիկների նման, վարդագույն, կապույտ, կարմիր և կանաչավուն գույներով:—Գրիչը՝ անհայտ։

—Պատվիրատուն՝ անհայտ (Յիրմանի ստորագրությունը անընթեռնակ է):—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ԺԼ դար:—Վայրը՝ Թուրքիա:—Ծանոթություն՝ սույն ձեռագիր Յիրմանը ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Յիրմանի հետևի մասում)
 Լիմայէ զախիրս չտան:
 ՌՃԶԶ (1727 թ.) չհաղցին:
 12:

№ 292

ՅԻՐՄԱՆ

(Թուրքերեն)

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 77.6×54.8 սմ.:
 —Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—Կազմ՝ չունի:—Պահպանակ՝ Յիրմանի վերնի մասում, հետևում, կապված է կանաչավուն մի շոր, որպես պահպանակ, ամրոջ լայնության վրա, 54.8×42.2 սմ. ծավալով:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթերը՝ չունի:—Տողերը՝ ընդամենը 10 տող:—Գծումները՝ աչքի չափով:—Գիրը՝ արաբերեն (նզուր՝ թուրքերեն):—Ջարդագրություն՝ Յիրմանի վերնի մասում կա շատ գեղեցիկ մի զարդանկար, ներքևում կիսաշրջանակաձև, իսկ վերևում բրգաձև: Բարձրությունը է 36.7 սմ., իսկ լայնքը՝ 32.5 սմ.: Ներքնի մասում միաձուլված գրված է մահմետական «Ինսի իլլահ ռահման ռահիմ» բառերը, և «Մուհամեդ» ու 1—2 տող այլ արաբական անուններ, ոսկեգույն և կապույտ գույներով: Սրա միջև կողքին, աջակողմյան մասում կա ոսկեգույն մի տերև, 10.5×5 սմ. չափերով, որ շրջանակված է սիրուն վարդագույն ծաղիկներով և կանաչ տերևներով, և որի կենտրոնի սպիտակ թողված մասում գրված է արաբատառ թուրքերեն երեք բառեր: Սրանցից բացի, այս երկու կոմպոզիցիայից դուրս, ընդհանուր նկարում պատկերված են ոսկեգույն ծաղիկներ և ճյուղեր: Բուրգի երկու կողմերում նկարված են զարդեր, ծաղիկների նման, ոսկեգույն, կապույտ և կարմիր գույներով: Ընդհանուր սույն նկարից բացի, աջակողմյան և ձախակողմյան երկու կողմերում, նկարված են երկուսական կանաչ ճյուղեր, տասնական կանաչ տերևներ և երկուսական վարդագույն վարդեր (մեկը՝ կոկոն, մյուսը՝ բացված վարդ): Չափազանց գեղեցիկ վարդեր են սրանք, թուրքական մանրանկարչության հիանալի նմուշներ:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ԺԼ դար:—Վայրը՝ Թուրքիա:—Ծանոթություն՝ սույն ձեռագիր Յիրմանը ստացված է Հոգևոր ճեմարանի գրադարանից Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Ծաքարյանի միջոցով, 1965 թ. ապրիլի 15-ին։

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆիրմանի հետևի մասում.)

Ձուլում Աստ. չանկու Ֆարման է:
16:

№ 293

ԽՈՐՀՐԴԱՏԵՏԻ

Թղթերը՝ 23:—Պրակները՝ երեք (Ա՝ 10, Բ՝ 12, Գ՝ 1 թերթ):—Մեծությունը՝ 28.5×20×1.2 սմ.:—Նյութը՝ դեղնած կեղտոտած հաստ թուղթ:—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի երկու կողքերին ճնշումով ծաղիկներ և սրբեր են նկարված:—Պահպանակները՝ սկզբում 4 թերթ, իսկ վերջում 2:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ թղթեր՝ չկան:—Ցողերը՝ 23:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Ջարդագրություն՝ ձեռագիրն ունի մի հատ խորան (թ. 1ա), երկու հատ կիսախորան (թթ. 12ա և 15բ), մի քանի թռչուններ և ծաղիկներ, յոթ հատ լուսանցազարդ և ութ հատ գեղեցիկ թռչնագրեր: Բացի այդ ձեռագրում կան 22 հատ զանազան տեսարաններ Պատարագից, որտեղ նկարված են եկեղեցու քաղմաթիվ պաշտոնյաներ: Հետագայում 1933 թ., ձեռագրի վերանորոգման ժամանակ, մատյանի սկզբում ավելացված Գր էջում նկարված է մի սիրուն զարդագիր և լուսանցազարդ, Դա Եջում տավիղ նվագող մի մարդ, որի գլխին թագ կա, Դք էջում մի սկիհ և մի նշխար:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ծաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ ժե—ժՋ դարեր:—Ծանոթություն՝ 1985 թ. հունիսի 12-ին սույն ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատանն է նվիրվել Բուլղարիո Պոլովիվ քաղաքից Ներսես Գասապյանի կողմից: Մատյանը ս. էջմիածին է բերված Վեհապատ Հայրապետի ձեռամբ:

ՀԻՇՍԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. Ար.—...ք արկանելոյ սպաս եկե... կամեցի քահանայն պատարագ մատուցան... պարտի այսպէս խորհրդաբար զգեստավորիլ:

Քահանայք քո զգեցին զարդարութիւն և ...ցնծալով ցնծասցին:

Յիշիայ Տէր զԴավիթ և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդվալ Տեսնն և ուխտս եղ Աստուծոյ Յակոբայ, եթե ոչ մտից ի յարկս տան իմոյ, թէ ելից յամկողիմս մահճաց իմոց: ...տաց քուն աչաց իմոց կամ մինչ արտնականաց իմոց կամ հան... անց իմոց, մինչև գտից գտնելի յարկի Տեսնն Աստուծոյ յակ...: Ահայ լվաք զմամն: Եփրաթայ և գտաք զմայ ի դաշ-

տըս մայրից: Մտցուք ի յարկս նորա երկրպագուք ի տեղուք ուր կացիալ են ոտքն նորա: Արի Տէր ի հանգիստ քո դու, և տապանակ կտակի սրբութեան քո: Երիցունք քո զգեցին զարդարութիւն և սուրբ քո ցնծալով ցնծասցն վասն Դաւթի սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսսք յօծելոյ քումն:

Երդվալ Տէր Դավթի ճշմարտութեան և ոչ ստիաց նմա, ի պտղոյ որովայնի նորա մատուցանել յաթոտ նորա:

Եթէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Թ. Բա.—...նոցա մատցին յալիտեանս յալիտեանից յաթոտ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիօն և ընտրիաց բնակել ի մանս ասէ. այս է հանգիստ իմ յալիտեանս յալիտեանից, ի սմայ բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Ջայրիս սրայ օրհնելով օրհնեցից և զախքառ սօրայ լցուցից հացիս:

Երիցանց սօրայ զգեցուցից զփրկութիւն և սուրբ սօրայ ցնծալով ցնծասցին:

Արդ, ծագեցից եղջուր ի Դաւիթ պատարագ արարից զճրագ օծելոյ իմօ:

Թշմամիաց սորայ զգեցուցից զամօք և ի վերա նորա ծաղկեացի սրբութիւն իմ:

Փառք Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ:

Ով սրբազան պատարագիչ յիշիայ զաղօթս քոյ զհոգի զընծայիօղիս գրոյս Ռօստոմիմ և Դարէշանի հոգիմ:

Թ. Գա.—Ներսէս Գասապեան.

Պոլովիվ, 12.6.1985 թ.:

Թ. Դք.—Յանելուած խորհրդատետրիս գրեցաւ ի թիւն օգոստոսի 1933 տարւոյ՝ Ս. Լ. Գազանճեանէ:

Թ. 1ա.—Ես Գրիգոր քահանայ Մատթէոսի Մանդակունելոյ Ջորաթաղի Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ Տփխիսի:

Կտամ յիշատակ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Նիկովրայ, ի ձեռն եկեղեցական և աշխարհական պատգամաւոր Կաթողիկոսի ընտրութեան, ամենապատիւ Ստեփաննոս Եպիսկոպոսի Նիկովրոյ առ մի. Գասապտ էֆէնտի Գ. Թ. Գասապեանի 11-ն մայիս 1892 ամի, ի Տփխիս: Գրիգոր քահանայ Մանդակունի:

Թ. Յք.—(Կա 14 տող հիշատակագրություն, որ թանաքը անցել է և այլևս անընթեռնելի է եղել):

Թ. 17ք.—Յիշատակ է խոր ... ամէն: Յիշալից ի անմահ պատարաքին:

Թ. 23ք.—Յիշեա Տէր զհոգի Գևորգին և Քէթէվանի, և հանգո այցելութիւն ի լոյս երեսաց քոց:

Թ. եա.—23 պատկեր ունի իր մօտ:

(Ծարունակելի)